

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԾԱՐԱԿԱՆԱՑ

Գ. ՇՐՋԱՆԻ ԼԵՋՈՒՆ

Այս շրջանի տեղեկությունն է ժԳ. դարու սկզբից մինչև ժե. դարը, որի ձևերից զերարդինչը վերջին սահմանն է կազմում: Այս շրջանի շարականներից մի մասը գրուած է նախնական պարզ լեզուով և Ե. դարու ոճով, իսկ մի մասը Արարական շրջանի արուեստական լեզուով: Քակայն Արարական շրջանի արուեստական լեզուի ազդեցությունը առելի թուլանում է. օրինակ՝ Լամբրոնացու գրած շարականները: Իսկ Ն. Շնորհալին երբեմն առաջին և երբեմն երկրորդ շրջանի լեզուով է գրում:

Գ. շրջանի պարզ ոճին օրինակներից են՝ Լամբրոնացու

1. Այսօր յարեաւ 'ի մեռելոց փեսայն
անմահ և երկնաւոր, քեզ աւետիս խնդուեալն,
հարսն 'ի յերկրէ եկեղեցի, օրհնեալ
'ի ձայն ցնծութեան զԱստուած քո, Սիրոն:

2. Այսօր անճառ լոյսն 'ի լուսոյ
լուսաւորեաց զմանկունս քո, Երուսաղէմ,
քանից յարեաւ լոյսն քո՝ Բրիտանոս,
օրհնեալ 'ի ձայն ...:

3. Այսօր խաւարն անգիտութեան
հալածեցաւ երբեակ լուսալի և քեզ ծագեաց
լոյս գիտութեան, յարուցեալն 'ի
մեռելոց Բրիտանոս, օրհնեալ ...:

Թէև այս երգը գրուած է պարզ լեզուով, բայց դարձեալ ունի մի քանի այլաբանութիւններ, ինչպէս՝ օրինակ՝ փեսայն երկնաւոր, հարսն 'ի յերկրէ եկեղեցի, խաւարն անգիտութեան, լոյս գիտութեան, օրհնեաց փոխարէն պիտի լինէր՝ Բրիտանոս, քրիստոնէայ ժողովուրդ, կառաւորութիւն կամ հեթանոսութիւն, քրիստոնէաութիւն, և այլն:

Ինչպէս ասուեցաւ, Ն. Շնորհալու երգերը գրուած են նաև արուեստական նաև պարզ լեզուով, Նալիոց սիրով, և քէն հոյսեմք, Վերաձգողն երկնից՝ էջ 246, Այսօր 'ի կոտարուինն՝ էջ 262, Այսօր

անճառ՝ էջ 258: Եւ Մեծն վարդանի (Նեոբարսրաշ), Որ նախմտաց ևայն:

Ուրեմն, շարականների լեզուի ուսումնասիրութեամբ, նրանց գրութիւնը երեք շրջանի կտրելի է վերածել. ա) Ե. դարից ցէ. դար — պարզ և յստակ լեզու, բ) Ը. դարից ցժԳ. դար — խրթնութիւն, ճոխութիւն, աւելի բառեր քան մաքր, երգերն լի այլաբանութեամբ և պատկերաբ, գ) ժԳ. դարից ցժԵ. դարն, որ խառն է, մերթ պարզ և մերթ արուեստականի ազդեցութեամբ գրուած:

ԾԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԼԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Շարականների հեղինակների ցանկը թէև մի քանի տպագրուած շարականների մէջ կայ, բայց այդ արուած է մօտաւորապէս և հաւանօրէն կարծելով: Շարականների հեղինակները որոշելու համար, մենք դիմած ենք մեր մօտենադիրներին և հանած աւ դասակարգած զայնս, որի մօտին պիտի խօսինք այս գլխի մէջ և բոլորն էլ մօտենադրական ցուցմամբ:

Շարականների ցանկի մէջ այսպէս է բաշխուած.

1. Նախ Ս. Խաւակ և Ս. Մեծորդ ասացին զուրբ եղանակաւոր ձայն և զերկուսեանցին:

2. Ապա Սուրբ Խաւակ զՂազարոս և զկարգ Աւագ Շարաթու:

3. Ս. Մովսէս (Խորհնացի), Բերթող՝ զճրագալուցին Վարաթաթիւ, զկարգ Մննդեան և զԱնթառամն, զՏեառնքնադաւալին, զՄարութեան Զարցան և զասուլին պատկերն Հոգւոյ զաւառեան, ըզվարդավառի և զվերափոխման, և Վեհ ծացուցէ՛քն:

4. Սեփանոս Սիւնեցի՝ Աւագ Օրհնութիւնս:

5. Յովհան Մանգուկունի:

6. Տ. Կոմիտաս Կաթողիկոս՝ զՆովմասիմանց Անձինքան և զԶարցան:

7. Ս. Սահակ Զորափոխիցի՝ զՍալին, զԵկեղեցւոյ, զԵկեղեցւոյն և զՏէր յերկնիցն՝ Որ զարդարեաց:

8. Ս. Օհան Օձնեցի իմաստասէր՝
զկարգ Մեծի Տօնից:

9. Ստեփանոս Սիւնեցի (երկրորդ)՝
զԵՍՐԻՍԹԻՆ Սրբոցն՝ Խաչին, զոր ու-
մանք Ստեփանոսի Մոկաց Եպիսկոպոսի
տան՝ որ Ապարանցի էս կոչի:

10. Պետրոս Գեառգար՝ զՀանգըստ-
եան շարականն, զՄարտիրոսացն:

11. Գրիգոր Մագիստրոս՝ զՕրոս ըստ
պատկերի, զոր այլք Իգնակայ Զարա-
փորեցոյ տան:

12. Յակովբ Վրդ. Սաննիսցի՝ զՅա-
նուկընական ծոցոյ Հօրն, զՂլորմեան
Հանգստեան:

13. Գրիգոր Բ. Վկայաւէր՝ ճոր-
հուրդն անճառն է Մեծահրաշոյ:

14. Յովնանէս Վրդ. Սարկաւազ՝
զՂեռնդեանց Մանկունքն՝ Վայծառացան
այսօրս:

15. Ս. Ներսէս Շնորհալի՝ զվառ ձայն
Աւագ Օրհնութեան, զԵթնանասնիցն, ըզ-
Նինուէացոցն, զԱղսնացիցն կամ Կիւ-
րակէից, զՄոզկազարդի Հարցն:

Ա) Ս. Սահակի գրած շարականները. —
Ս. Սահակ, հաջ աշխարհի երկրորդ լուսա-
ւորիչը, որի ժամանակ է որի թմանդա-
կութեամբ հայոց գրիւրը գտնուեցան, մեծ
նշք տարու Եկեղեցու քարեղարդութեան:
Աւանդութիւնը ստեղծ է, որ Ս. Սահակ
ուր իղանակներ է երկու ասեղիներ է
յօրինողն է, բայց մենք տեսնենք նրան
վերագրուածներին և տեսնենք իսկապէս
թէ ո՞րն է նորանք և որը ոչ: Ս. Սահա-
կին վերագրուած են Ղազարու և Աւագ
Շարթու (Եթնեակի) շարականները:

Ղազարու յարութեան շարականը —
Աւագոս գոյով 'ի Բնեմիաշ — կարող է
Ս. Սահակի գրչի արդիւնք լինիլ, բայց
ամբողջ Աւագ Շարթու շարականները
նրանը չեն կարող լինել, և ահա ինչու
Նախ՝ որ Աւագ Շարթու բոլոր շարականն
ներ է ոչ լեզուի և ոչ մտքի մէջ միու-
թիւն կայ, և երկրորդ՝ այդ շարական-
ների մի քանիսի Ս. Ներսէս Շնորհալու
պատկանելը հաստատապէս գիտենք, որ ի-
նակ՝ Որ 'ի Ժրովէական աթոռս՝ էջ
230, Վերածգողն երկնից՝ էջ 246, Այս-
սօր 'ի կատարութեան էջ 252, Նոյնիսկ
լեզուի համեմատութեամբ կարող ենք

ցոյց տալ, որ Աւագ Շարթու շարական-
ները բոլորն էլ Ս. Սահակինը չեն:

Ս. Սահակին կարող ենք վերագրել
այն շարականները, որոնք պատմողական
ոճ ունին և պարզ ու յստակ լեզու, որ-
պիսիք են՝ Վիմաստուն կուսանքն, Շնոր
սքանչելիք այսօր տեսանեմք, Այսօր
կանգնեցաւ, Արծաթաթիւթեամբ մու-
կալ Յուդա, Վի գիշերի, Ուղ սքան-
չելի և տեսիլ տաւոր, որոնց մէջն մի
պարբերութիւնը 3 տներ է բաղկացած:
Ս. Սահակ երգել է մի քանի շարական-
ներ, յետոյ ժամանակի ընթացքում այլ
հայրերի գրած շարականները նման բո-
վանդակութիւն ունենալուն համար Ս.
Սահակին են համարուած և նրա անուան
տակ էլ մնացել ու մեզ հասել: Սակայն
այդ շարականներից շատերի նման բովան-
դակութիւն ունենալն ևս մեզ հաստատում
է, որ բոլորն էլ Ս. Սահակինը չեն, ո-
րովհետեւ նայն մարդը ինչպէս պիտի գրէր
նման բովանդակութիւն ունեցող մի քանի
շարականներ:

Բ) Ս. Մեսրոպի գրած երգերը. — Ս.
Մեսրոպ Մայառաց, որ Ս. Սահակի աջա-
կիցն էր և միանգամայն զառզ տառերի,
նոյնպէս համարուում է Նախաքննախնդիր
էր միտի ապաւելի Ս. Եկեղեցւոյ, ուստի
նա էլ իւր բազմաշարաւոր ազգի մեղքերի
համար գրել է ապաշխարութեան շարա-
կաններ: Նրա վերագրուած է զկարգ
Ապաշխարութեան: Սակայն տեսել թէ ա-
պաշխարութեան բոլոր շարականները Ս.
Մեսրոպին են, առնուազն մեծ սխալ է,
որովհետեւ ապաշխարութեան բոլոր շարա-
կանների մէջ էլ ոճի, լեզուի միութիւն
չկայ, որը կարելի է միշտ տեսնել մի
հնդկանի բոլոր գրութեանքների մէջ:

Թէև Ապաշխարութեան բոլոր շարա-
կանները Ս. Մեսրոպին են վերագրուած,
բայց մատենագրական ցուցումներից գի-
տենք, որ պահոց Կիւրակէնների շարական-
ները Ն. Շնորհալու գրութեան են:
Հարկու ապաշխարութեան շարականների
մէջ կան այնպիսիք, որ Ս. Մեսրոպի
գրչին կարող են պատկանիլ: Լեզուի մաս
սին խօսելիս մատենախիստ աւելի քանիսը
Ապաշխարութեան շարականներից բաւար-
կանին մեծ թիւը պատկանում է նրան:

Ս. Մեքսիկայի համար Կիրակոս Գանձուկեցին տեսւմ է. «... նորա է ... և աւագ չարութիւն երկից աւուրց օրհնութիւն՝ երկուշարութիւն, երեքշարութիւն և չորեքշարութիւն» (էջ 46):

Գ) Ըստ ցանկի, երբորդ հեղինակ շարականի համարւում է Մովսէս Քերթովանայր, որին ցանկը վերագրում է զձրագայտյցին Վերախաղիքին, զկարգ Մննդեան, զՎնթառաման, զՏեառնընդառալին, զՅարութեան Լարցոսն, զառաջին պատկերոն Լոգուոյ Գալստեան, զվարդավառին, զվերադրութեան և զՄեծազուգեքն:

Կիրակոս նախընթաց հեղինակների և Թարգմանչաց մասին առհասարակ հետեւեալն է տեսւմ. «Արարին և երգս չարականաց քաղցր և քեղեցիկ եղանակու և մեծ խորհրդով ծննդեան Քո.ի և Քառասնորեայ գալստեան՝ ի տաճարն, Մկրտութեանն և Եկուղորութեանն՝ ի Բնթանիա և յերուսաղէմ, Մեծի Շարաթուն չարչարանաց և յարութեան, Լամբարձման և Լոգուոյ գալստեանն, Խաչի և Եկեղեցւոյ և այլ տօնից տէրութեանաց և որոց ամենեցուն, Ապոլիտարութեան, ամենայն նշնեցիւց, պէտզէտ և զանազանս անթիւ, որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս Լայտառանեայց» (էջ 17-18):

Սակայն ցանկում Մ. Խորենացուն ընծայուած երկերը նորա ոճն ու լեզուն չունեն. ուստի գծաւորութիւն կը յարուցուի Խորենացուն վերագրել:

Այս բոլոր շարականներից, մտքերի և լեզուի պարզութիւնն ի նկատի առնելով, կարելի է այն եզրակացութեան յանգիլ, որ յիշուած Խորենացունը կարող են լինել՝ «Վերախաղիք Մարիամ Գարբիէի աւետիսքն» (էջ 18), «Անկանիմք առաջիք» (էջ 20), «Խորհուրդ մեծ և սքանչելի» (էջ 23), «Ս. զԱճոծինն օրհնութեամբ մեծացուցանեմք» (էջ 26) և մի քանի այլ Մեծացուցեք, որք պարզ լեզու ունեն և որք ցրուած են Շարականի մէջ, և ոչ թէ բոլոր Մեծացուցեք վերագրել Խորենացուն, որոնցից շատերը պատկերաւոր ոճ ունեն և այլաբանական արտայայտութիւններ:

Խորենացուն գրածը կարող է լինել Տեառնընդառալինը և Պայծառակերպութեան տօնի, թէև ոչ բոլորը:

Ինչ վերաբերում է Ս. Լոգուոյ գալստեան շարականներին, կարող ենք տեսլ, որ օրանցից առաջին աւուր Ծրանութիւնը՝ «Առաքելոյ աղաւնոյ» (էջ 380) Խորենացունն է: Թէև վերադրութեան շարականներն էլ բոլորը Մ. Քերթովանայրի վերագրուած, սակայն վերոյիշեալ հանգամանքները ի նկատ ունենալով, չենք կարող սորան ընծայել բոլորը, այլ Վերախաղիք իշխանութիւն» (էջ 463), պարզ լեզու ունենալուն համար կարելի է Խորենացուն վերապահել: Նոյնպէս առաջին աւուր Ծրանութեան՝ «Այսօր փողովալ սրբոցն» (էջ 466), առաջին երեք տունը Խորենացունն է. Շարականների ցանկում այլև տեսւմ է. «Եփեկ Ս. զԱնտոնին, զԹագաւորացն, զառաքելոցն, զՅովհաննու, զՍրբոյն Գրիգորի, զմարգարէիցն և զվարդանանցն, զայս ամենայն տմանք Անանիայի տան և տմանք Խորենացւոյն»:

Այս վերոյիշեալ շարականներից աչմէկը Խորենացու գրչին կարող են պատկանիլ, որովհետեւ ըստ մատենագրական ցուցման»:

1) Անտոնի շարականը գրել է Ս. Ներսէս Շնորհալին:

2) Վարդանանց շարականը հիւսուած է Խորենացուց շատ յետոյ, որովհետեւ գծաւոր թէ այդպէս չուտ յիշատակուէին այն նաւասականները, որոնց մասին Խորենացին մի խօսք տեղում չէ տեսւմ:

3) Թագաւորաց շարականների մի մասը Ն. Շնորհալունն է, «Արիտեալքն էլ (Վարդանանց շարականի «Մանկուցք») Շիրակացունը: Արդ, ինչ պատճառ կայ, որ Խորենացուն վերագրուած են տոյնպիսի երգեր, որոնք շարագրուած են ուշ ժամանակ այլ հեղինակի ձեռքով: Այս երեւոյթը կարող ենք բացատրել այսպէս. Խորենացին գրականութեան մէջ յայտնի անձն էր. նրա գրուածքները համարուում էին օրինակ բոլոր յիտադայ սերունդներին, ունէր և ունի մեծ հեղինակութիւն. ուստի մի աննշան մարդ կամենալով իւր գրած կամ շարագրած ու եղանակած երգը մտցնել Եկեղեցու մէջ, օգտուել է Խորենացու աննշան անունից և նրանով էլ տարածել, և այս հանգամանքը պատճառ է դարձել երգի փոխվորականանալուն:

Դ) Ասեփաֆու Սիւնեայ (441 Յ. Ք.):
Սիւնեայ Ստեփանոսին ցանկը վերագրում է Աւագ Օրհնութիւնները:

Ստեփանոս Սիւնեցու վասին Ուս-
պելեան առում է. Գ... ըստանեաց կ
ղտիթն ձալնսն, և կարգեաց շարեաց զյա-
բութեան օրհնութիւնսն. երգեաց կցորդո
քաղցրաւամբ, յարմարեաց զստողդիտ
Յիւնանցն կօթն եղանակօք յոյժ խորհրդ-
գաւար և զպահոցն որ յաղունազան երգի,
և մեկնեաց զխորհուրդ զիշերայիսն պաշ-
տամանք (էջ 101, ապ. Մոսկուս, 1861):
ինչպէս որ մատենագրական ցուցումից
տեսնում ենք. Ստեփանոսին եօթն եղա-
նակն է վերագրուած, իսկ օւթներորդը
— վառ քայն — ներսէս Շնորհալուսն են
ասում լինել, ինչպէս տեսնում ենք իւր
տեղում:

Իսկապէս թխալ է բոլոր Աւագ Օրհ-
նութիւնները տալ Ստեփանոսին, ըստ
բոլորին ապ մի գործօն զեր է կատարել
ժամակարգութեան կարգաւորման մէջ,
ինչպէս մատենագիրն կը վկայէ, կարելի
է տեսլ, որ բաւական թուով Աւագ Օրհ-
նութիւններից սրանն են:

Երաւի, այս Աւագ Օրհնութիւնները,
որք ձեռագիր յիշատակարաններում (թիւ
1673, 1582, 1598, 1615 և 1616) «Օրհնու-
թիւններ Թարութեան Տն. մերայ Յի. Քի.»
վերառուութիւնն ունեն, հնութեան կնիք
ունեն, կարելի է տեսլ մինչև ութներորդ
դարը գրուած, արդէն Սաղմոսների բա-
ռերով սկսուիլը, ըստ իս, ցոյց է տալիս,
որ այն ժամանակի գրութիւն են սրանք,
երբ դաղմոսերգութիւնը կամաց կամաց
հեռացւում էր և անգի էր տալիս Եկե-
ղեցույ Հարց հիւսած երգերին: Այս Օրհ-
նութիւնները տառական տներին են ըստ-
կացած և սակաւ բացառութեամբ Սաղմոս-
ների ըզմանդակութիւն ունեն:

Եթէ խորազննին լինենք, կը տես-
նենք, որ դրանց մէջ ոճի տարբերու-
թիւն կայ, օւստի կարելի է տեսլ, որ
որոշ թիւ մը որոնցից յետագայ ժամա-
նակում հիւսուած լինեն և խմբագրու-
թեանց ժամանակ այդ վերառութեանց
տակ միացած: Սակայն այդ օւշ ժամանա-
կում գրուածներն էլ այնքան յետոյ չեն,
գուցէ մի քանի տասնեակ տարիների
տարբերութիւն լինի մէջերսին:

Ե) Բովիմն Մանկականի (480 Յ. Ք.):
«Սա ըստում կարգաւորութիւնս եմոթ
լեկեղեցի, կարգեաց քարոզս պոռնուցիցն
և աղօթս նոցա զերրորդ ժամու և զվեցիս
բորդին և զեօթնբորդին...»: Գովման
իմաստաբերի կանոնների մէջ յիշուած է
որ Մանկականին կարգաւորել է աղօթ-
ները, ըստ թէ երգեր հիւսել է, այդ
մասին օշինչ չի ասում, այդ միայն չա-
րականների ցանկումն է ասուած և վերա-
գրած նրան «Անկիդրն քանն Աճ» և վերջի
էլ աւելացնում է թէ «զոր ոմանք Օմնե-
ցա պան»: Ըստ իր, աւելի շատ Օմնե-
ցունը կարող է լինել քան Մանկակա-
նունը, որովհետեւ նախ որ այբբենական
կարգով է (Արաքական շրջանի յատկու-
թիւն) գրած, և երկրորդ՝ որ Արաքերէնի
պղծցութեան նշաններն ունի իւր մէջ:

«Անկիդրն քանն Աճ», որ վասն մեր
համբեր մահու,

«Բառնալով զդատականիք անիծիցն առ
'ի մէնջ,

«Գերապանն մաքրութեամբ զմարդիկ
վերագրեաց խաչակիցք իւր և վկայք
կամաւոր մահուամբ իւրոյ:

«Իմամարտ գոլով արեցն ընդ կառ-
պարիշտ պաշտամանս,

«Երջանիկ ճակատամարտք զայտնեցան
անպարտելիք. [ընցին,

«Ջի զԱճ բոլորից դիւրութեամբ սի-
ւեակցին Հօր հետեւել ստացան ըզ-
թագն պարծանաց» (էջ 439):

Ճշմարիտ է, սրա լեզուն էլ քաւա-
կանին պարզ է, օսկայն եթէ համեմատենք
Ս Ստեփանի կամ Ս Մարտպի գրած չա-
րականների լեզուն հետ, օրինակ՝ «Ի գի-
շերիշի հետ, բաւականաչափ տարբերու-
թիւն կը գտնենք: Աւելի շուտ այս չարա-
կանը կարելի է դասել Արաքական շրջանի
առաջին աստիճանների վերայ:

Արդ, թէ արդե՞ս Մանկականին եր-
գեր գրել է, դժուար կը լինի տեսլ, ք-
որովհետեւ փառաբեր չունենք: Փարպեցիէն
գիտենք այսքանը, որ Վոհանի յայթա-
թիւնից յետոյ Աստուծոն փառաբանելու
համար եկեղեցում աղմոսել տուաւ, հա-
ւանական է կարծել, որ այն ժամանակ
չարականները քայքայն էլ գործածական
չէին եկեղեցիներում, ըստ նա քարոզիչ
և աղօթքներ գրել է: Ուրեմն չարական-
ների ցանկում յիշուածը նրա մասին
հաստատութիւն չի գտնուի:

(Շար. 7)

ՎԱՀԱՆ ԲԺՇԿԵԱՆ